ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2013

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրում պետք է ընտրել այն տարբերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով Դուք կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 Ե՞րբ է Տիգրան Երվանդյանը, դաշնակից զորքերի գլուխ անցած, գրավել Բաբելոնը.

1) Ք. ա. 538 թ.
2) Ք. ա. 553 թ.
3) Ք. ա. 524 թ.
4) Ք. ա. 529 թ.

2 Ե՞րբ Արտաշես I–ը վճռական հակահարված հասցրեց Անտիոքոս IV թագավորին.

1) Ք. ա. 160 թ.
2) Ք. ա. 165 թ.
3) Ք. ա. 175 թ.
4) Ք. ա. 185 թ.

3 Ե՞րբ է կառուցվել Վաղարշապատի Ս. Էջմիածին Մայր տաճարը.

1) 301 թ.
2) 325 թ.
3) 303 թ.
4) 313 թ.

4 Ո՞ր թվականն է արաբական մի սկզբնաղբյուրում կոչվել «կրակի տարի».

1) 775 թ.
2) 725 թ.
3) 703 թ.
4) 705 թ.

5 Ե՞րբ է Հակոբ Ջուղայեցին բանակցություններ սկսել Ռեչ Պոսպոլիտայի թագավորի հետ.

1) 1689 թ.
2) 1677 թ.
3) 1678 թ.
4) 1679 թ.

6 Ե՞րբ է օսմանյան Թուրքիայում արգելվել Հայոց պատմության դասավանդումը հայկական դպրոցներում.

1) 1879 թ.
2) 1878 թ.
3) 1880 թ.
4) 1882 թ.

7 Հայկական պահանջների համատեղ հուշագիրը հայկական երկու պատվիրակությունների կողմից ստորագրվեց՝

1) 1919 թ. փետրվարի 6–ին
2) 1919 թ. հունվարի 18–ին
3) 1919 թ. փետրվարի 12–ին
4) 1919 թ. փետրվարի 25–ին

8 **Ազգային միացյալ կուսակցությունը ստեղծվել է՝**

1) 1967 թ. ապրիլի 24–ին
2) 1964 թ. ապրիլի 24–ին
3) 1966 թ. ապրիլի 24–ին
4) 1965 թ. ապրիլի 24–ին

9 **Ք. ա. 830–ական թվականներին Հայկական լեռնաշխարհում հայտնի համադաշնություններից ո՞րն էր ամենամեծը.**

1) Զաբախա
2) Դիաուխի
3) Էթիունի
4) Մելիտեա

10 **Ո՞րն էր Երվանդ IV–ի կառուցած քաղաք–սրբավայրը.**

1) Բագավանը
2) Երվանդաշատը
3) Երվանդակերտը
4) Բագարանը

11 **Ո՞ր կաթողիկոսի սահմանած օրենքով Վաչե Մամիկոնյանը և հետագայում Վարդան Մամիկոնյանը դասվեցին հայոց սրբերի շարքին.**

1) Հուսիկի
2) Արիստակեսի
3) Վրթանեսի
4) Ներսես Մեծի

12 **Ի՞նչ որոշում է ընդունել Զաքարիա Զագեցու նախաձեռնությամբ հրավիրված հայ իշխանների հատուկ ժողովը.**

1) հայոց իշխանաց իշխան Աշոտ Բագրատունուն հռչակել հայոց թագավոր
2) հայոց իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու որդուն հռչակել հայոց թագավոր
3) Հայաստանի թագավորությունը ճանաչելու խնդրանքով դիմել բյուզանդական Վասիլ I կայսրին
4) հայոց իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու որդի Սմբատին թագավոր ճանաչելու խնդրանքով դիմել խալիֆին

13 **Որտե՞ղ է ստեղծվել «Հայասեր–ազգասեր» խմբակը.**

1) Թիֆլիսում
2) Վանում
3) Երևանում
4) Մոսկվայում

14 **Ո՞վ էր Հայկական կորպուսի հրամանատարը.**

1) Մ. Արեշյանը
2) Ա. Օզանյանը
3) Թ. Նազարբեկյանը
4) Մ. Սիլիկյանը

15 **Ռուս–թուրքական երկրորդ կոնֆերանսում թուրքական պատվիրակությունը գլխավորում էր՝**

1) Ն. Նարիմանովը
2) Ք. Կարաբեքիրը
3) Յ. Քեմալը
4) Մ. Քեմալը

16 **Թվարկվածներից ո՞ր կինոնկարն է ստեղծվել Հայրենական մեծ պատերազմի տարիներին.**

1) «Դավիթ Բեկը»
2) «Նռան գույնը»
3) «Եռանկյունի»
4) «Մենք ենք, մեր սարերը»

17 **Հայոց ո՞ր արքայի մասին են պատմիչի հետևյալ խոսքերը.**
«Հայոց թագավորը վերադարձավ մեծ հաղթությամբ, շատ ավարով ու ցնծալից ուրախությամբ. նա վերադարձավ Հայաստան՝ Այրարատ գավառը՝ Վաղարշապատ քաղաքը. եկավ մեծ ուրախությամբ, բարի անունով ու շատ ավարով»:

1) Խոսրով II–ի
2) Վաղարշ II–ի
3) Տրդատ II–ի
4) Տրդատ III–ի

18 **Հայոց ո՞ր արքան է ներկայացրել հետևյալ տարածքային պահանջները.**
«... հնում Կեսարիայի ուրիշ տասը քաղաք մերն են եղել, է՛տ տուր, Ուռհա (Եդեսիա) քաղաքն էլ մեր նախնիքն են շինել, ուստի, եթե չես ուզում, որ խռովություն ծագի մեր մեջ, է՛տ տուր»:

1) Պապ
2) Արշակ II
3) Տիրան
4) Խոսրով III

19 **XX դ. սկզբին Ռուսաստանի հետադիմական վարչակարգի դեմ հայ ժողովրդի դիմադրությունը կազմակերպելու համար Թիֆլիսում ստեղծված մարմինը կոչվում էր՝**

1) Պաշտպանության պետական կոմիտե
2) Ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտե
3) Ազգային կենտրոնական վարչություն
4) պատգամավորական Կենտրոնական ժողով

20 **Ի՞նչ տիտղոս էին կրում Հայկազուն–Երվանդական արքաները Ք. ա. VII–VI դդ.**

1) «Թագավորների թագավոր»
2) «Մեծ Հայքի թագավոր»
3) «Հայոց թագավոր»
4) «Վանի թագավոր»

21 **Գտնել սխալ պատասխանը.**
Ի՞նչ հետևանք ունեցան Տիգրան Մեծի նվաճումները.

1) Հայաստանն ամրապնդվեց Միջերկրական ծովի արևմտյան ափերին:
2) Հայաստանն ամրապնդվեց Միջերկրական ծովի արևելյան ափերին:
3) Սելևկյան Ասորիքն ու Պարթևստանը տարածաշրջանում իրենց դիրքերը զիջեցին Հայաստանին:
4) Տիգրան Մեծը դարձավ Առաջավոր Ասիայի մեծագույն մասի տիրակալ:

22 **Կասրե–Շիրինում կնքված պայմանագրի հետևանքով՝**

1) Հայաստանն ամբողջությամբ ընկավ Սեֆյան Պարսկաստանի տիրապետության տակ
2) Հայաստանն առաջին անգամ բաժանվեց Սեֆյան Պարսկաստանի և Օսմանյան կայսրության միջև
3) Հայաստանն ամբողջությամբ ընկավ Օսմանյան կայսրության տիրապետության տակ
4) Հայաստանը կրկին վերաբաժանվեց Օսմանյան կայսրության և Սեֆյան Պարսկաստանի միջև

23 **Ճակատամարտերը դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Խառանի
բ. Արածանիի
գ. Պոնտոսի Զելա քաղաքի
դ. Ակցիումի
ե. Տիգրանակերտի

1) գ, դ, ե, բ, ա
2) ե, բ, գ, ա, դ
3) ե, գ, բ, դ, ա,
4) բ, ե, գ, ա, դ

24 **Բագրատունյաց աթոռանիստները դասավորել ըստ մայրաքաղաք դառնալու ժամանակագրական հաջորդականության.**

ա. Կարս
բ. Բագարան
գ. Անի
դ. Երազգավորս (Շիրակավան)

1) բ, ա, դ, գ
2) բ, դ, ա, գ
3) բ, դ, գ, ա
4) դ, բ, ա, գ

25 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Հայկական մարզի ստեղծումը
բ. Կովկասի փոխարքայության հիմնումը
գ. Երևանի նահանգի կազմավորումը
դ. եկեղեցական կանոնադրության հրապարակումը

1) բ, ա, գ, դ
2) ա, դ, բ, գ
3) ա, դ, գ, բ
4) ա, բ, գ, դ

26 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Անդրկովկասի երեք հանրապետությունների կենտգործկոմների ներկայացուցիչների լիազոր կոնֆերանսը Թիֆլիսում
բ. Հայաստանի խորհուրդների առաջին համագումարը
գ. Անդրկովկասի խորհուրդների առաջին համագումարը
դ. ԽՍՀՄ խորհուրդների առաջին համագումարը

1) դ, ա, բ, գ
2) բ, ա, գ, դ
3) բ, գ, դ, ա
4) ա, դ, գ, բ

27 **Հայկական լեռնաշխարհի գետերը համապատասխանեցնել լեռներին, որոնցից դրանք սկիզբ են առնում.**

1. Խաչափայտի
2. Բյուրակնյան (Սրմանց)
3. Ծաղկանց
4. Ծաղկավետ

ա. Արևելյան Եփրատ
բ. Արևելյան Տիգրիս
գ. Ճորոխ
դ. Արևմտյան Եփրատ
ե. Արաքս

1) ա–1, բ–3, դ–4, ե–2
2) ա–4, գ–1, դ–3, բ–2
3) ա–3, գ–1, դ–4, ե–2
4) ա–1, բ–4, դ–3, գ–2

28 **Հուստինիանոս I–ի հրապարակած օրենքով Արևմտյան Հայաստանում ստեղծված վարչամիավորի կենտրոնը համապատասխանեցնել վարչամիավորին.**

1. Առաջին Հայք	ա. Մելիտինե
2. Երկրորդ Հայք	բ. Մարտիրուպոլիս
3. Երրորդ Հայք	գ. Հուստինիանուպոլիս
4. Չորրորդ Հայք	դ. Կեսարիա
	ե. Սեբաստիա

1) 1–գ, 2–դ, 3–ե, 4–ա
2) 1–գ, 2–ե, 3–ա, 4–բ
3) 1–դ, 2–ա, 3–ե, 4–բ
4) 1–բ, 2–ե, 3–դ, 4–գ

29 **Ստորև բերված պնդումներից ո՞ր երկուսն են սխալ.**

ա. Հայոց իշխան Եսայի Աբու–Մուսեի քաջարի զինվորները Քթիշ ամրոցը (Տող գյուղի մոտ) մոտ երկու տարի անառիկ պահեցին:
բ. Բուղան դիմում է խաբեության. բանակցելու պատրվակով իր մոտ է կանչում ու ձերբակալում Եսայի իշխանին:
գ. Վասպուրականում ապստամբները Գուրգեն Արծրունու գլխավորությամբ ջախջախում և դուրս են մղում արաբներին:
դ. Հայոց հզորագույն ապստամբությունը (850–855 թթ.) սասանեց արաբական տիրապետությունը Հայաստանում:
ե. Սմբատ սպարապետի որդին՝ Աբաս Բագրատունին, 862 թ. ճանաչվեց հայոց իշխան ու սպարապետ:

1) ա, ե
2) ա, բ
3) ա, դ
4) գ, ե

30 **Ե՞րբ է գահընկեց արվել Բակուր Արշակունին.**

1) 163 թ.
2) 161 թ.
3) 185 թ.
4) 164 թ.

31 **Ե՞րբ են հայերն ապստամբել և սպանել Ակակիոսին.**

1) 554 թ.
2) 536 թ.
3) 539 թ.
4) 548 թ.

32 **Ե՞րբ է սկսվել Սարիղամիշի ճակատամարտը.**

1) 1915 թ. հունվարի 5–ին
2) 1914 թ. հոկտեմբերի 16–ին
3) 1914 թ. հուլիսի 19–ին
4) 1914 թ. դեկտեմբերի 9–ին

33 **Ե՞րբ է ընդունվել ԽՍՀՄ կառավարության որոշումը խորհրդա–թուրքական բարեկամության և չեզոքության պայմանագրի դադարեցման մասին.**

1) 1947 թ. մայիսի 4–ին
2) 1945 թ. մարտի 19–ին
3) 1945 թ. հուլիսի 19–ին
4) 1947 թ. ապրիլի 30–ին

34 **Որտե՞ղ էր գտնվում Արեգ–Միհրի պաշտամունքի գլխավոր կենտրոնը.**

1) Բագառիճ ավանում
2) Անի ամրոցում
3) Երազամույնում
4) Աշտիշատում

35 **Մեսրոպ Մաշտոցը ո՞ր քաղաքում հանդիպեց հունարեն գրչության արվեստի խորագիտակ Հռոփանոսին.**

1) Ամիդ
2) Սամոսատ
3) Եդեսիա
4) Տարսոն

36 **Ո՞վ է հայ առաջին պարբերականի հիմնադիրը.**

1) Գրիգոր Արծրունին
2) Հարություն Շմավոնյանը
3) Մխիթար Սեբաստացին
4) Հակոբ Մեղապարտը

37 **Որքա՞ն հայ բնակչություն կար Կիլիկիայում 1920 թ. սկզբներին.**

1) 150 հազար
2) 200 հազար
3) 100 հազար
4) 50 հազար

38 **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը.**

«Ամեն ոք իր մասին է մտածում: Իր երկրի սահմաններից այն կողմ եթե նայող կա, նայում է միայն հանուն իր շահերի: Ոչ ոք ոչ մի մարդ չի ուղարկի տաճկական ճակատ՝ տուն գնացող ռուսներին փոխարինելու համար…մենակ ենք և պետք է ապավինենք միա՛յն մեր ուժերին՝ թե՛ ճակատը պաշտպանելու և թե՛ երկրի ներսում կարգ հաստատելու համար»:

1) Թովմաս Նազարբեկյանը
2) Մովսես Սիլիկյանը
3) Ռուբեն Տեր–Մինասյանը
4) Արամ Մանուկյանը

39 **Ո՞ր իրադարձության հետ կապված է այս դիրքորոշումն արտահայտվել.**

«Մենք չենք կարող երբևիցե հրաժարվել հողային պահանջներից, որոնք մեզ համար անհրաժեշտություն են, մեր կենսունակության և ապրելու կարելիության առաջին պայմանը»:

1) ռուս–թուրքական պայմանագրի կնքման
2) Կարսի պայմանագրի կնքման
3) Ջավախքի և Լոռու պատկանելության որոշման
4) Սևրի պայմանագրի կնքման

40 **Թվարկվածներից ո՞րը «յոթ ազատ արվեստների» համակարգի Եռյակ ենթահամակարգից չէ.**

1) երաժշտություն
2) ճարտասանություն
3) քերականություն
4) տրամաբանություն

41 **Հայ գաղթականներն առաջին հերթին ձգտում էին հաստատվելու այն երկրներում, ուր կար հայկական համայնք, որովհետև՝**

1) այդ երկրները հեռու էին Թուրքիայից
2) ակնկալում էին այդ երկրների սոցիալիստական իշխանությունների աջակցությունը
3) այդ երկրներում կար ժողովրդավարական ուժեղ իշխանություն
4) ակնկալում էին իրենց ազգակիցների օժանդակությունը

42 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Գող Վասիլի իշխանության վերացումը
բ. Փիլարտոս Վարաժնունու իշխանության վերացումը
գ. Գող Վասիլի իշխանության հիմնադրումը
դ. Փիլարտոս Վարաժնունու իշխանության հիմնադրումը
ե. սելջուկների կողմից Անտիոքի գրավումը

1) դ, գ, բ, ե, ա
2) գ, դ, ե, ա, բ
3) դ, գ, ե, բ, ա
4) դ, ե, գ, բ, ա

43 **Դեպքերը դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. բոլշևիկների կազմակերպած հեղաշրջումը Պետրոգրադում
բ. Անդրկովկասյան սեյմի լուծարումը
գ. հայկական զորքերի կողմից Սարդարապատի հետգրավումը
դ. Հայ զինվորական միության ստեղծումը
ե. Անդրկովկասի կոմիսարիատի ստեղծումը

1) բ, դ, ա, ե, գ
2) ա, ե, դ, գ, բ
3) դ, բ, ա, գ, ե
4) դ, ա, ե, գ, բ

44 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Մոսկվայի պայմանագրի ստորագրումից հետո թուրքական զորքերի հեռանալն Ալեքսանդրապոլից
բ. Հայհեղկոմի դեկրետը Փետրվարյան ապստամբության բոլոր մասնակիցներին համաներում շնորհելու մասին
գ. Մոսկվայի ռուս–թուրքական երկրորդ կոնֆերանսից հետո հայկական պատվիրակության բողոք–հուշագրի ներկայացումը Վ. Լենինին՝ հայկական շահերի անտեսման կապակցությամբ
դ. Հայհեղկոմի վերակազմավորվելը ՀՍԽՀ Ժողկոմխորհի
ե. Փետրվարյան ապստամբության ժամանակ Կարմիր բանակի զորքերի կողմից Երևան մտնելը

1) բ, ա, ե, դ, գ
2) ե, գ, բ, ա, դ
3) ե, գ, ա, բ, դ
4) ա, բ, ե, դ, գ

45 **Կատարել համապատասխանեցում.**

Հիմնադրման վայր	*Կրթական հաստատություն*
1. Վենետիկ	ա. Ռափայելյան դպրոց
2. Զմյուռնիա	բ. Մեսրոպյան դպրոց
3. Կ. Պոլիս	գ. Մարդասիրաց ճեմարան
4. Կալկաթա	դ. Կարապետյան դպրոց
	ե. Սկյուտարի դպրոց

1) 1–դ, 2–գ, 3–ա, 4–բ
2) 1–ա, 2–բ, 3–ե, 4–գ
3) 1–գ, 2–ա, 3–բ, 4–դ
4) 1–ա, 2–ե, 3–գ, 4–դ

46 **Կատարել համապատասխանեցում.**

Անուն	*Պաշտոն*
1. Գագիկ Հարությունյան	ա. ՀԿ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար
2. Վազգեն Մանուկյան	բ. ՀՀ Ազգային ժողովի նախագահ
3. Արթուր Մկրտչյան	գ. ՀՀ փոխնախագահ
4. Սերժ Սարգսյան	դ. ԱԺՄ նախագահ
5. Կարեն Դեմիրճյան	ե. ՀՀ երրորդ նախագահ
	զ. ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահ

1) 1–դ, 2–գ, 3–ա, 4–զ, 5–բ
2) 1–գ, 2–դ, 3–զ, 4–ե, 5–բ
3) 1–բ, 2–ե, 3–գ, 4–դ, 5–ա
4) 1–գ, 2–զ, 3–դ, 4–ե, 5–ա

47 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների երկու ճիշտ բացատրությունները.**

1) «Որոգայթ փառաց» գրքում պետության բարձրագույն օրենսդիր մարմինը պետք է կազմվեր ժողովրդի կողմից ընտրված փոխանորդներից (պատգամավորներից)։
2) Նադիր շահի կողմից Ղարաբաղում ստեղծված մելիքություններն անվանվում էին սղնախ։
3) Հայդուկ արաբերեն նշանակում է հարյուրապետ։
4) Դիվանագետներ Մ. Սայքսի ու Ժ. Պիկոյի և Պողոս Նուբարի միջև Լոնդոնում ձեռք բերված համաձայնությամբ հայ կամավորներից կազմված ջոկատը կոչվում էր «Արևելյան լեգեոն»։
5) Խորհրդային Հայաստանին և նրա սովյալ բնակչությանը արտաքին օգնության կազմակերպման գործում նշանակալից դեր կատարած, 1921թ. սեպտեմբերին Երևանում հիմնված մարմինը կոչվում էր Հայկական ազգային կոմիտե։

48 **Բերված փաստարկներից առանձնացնել երկուսը, որոնք Մանազկերտի ճակատամարտի հետևանքներ չեն.**

1) Բյուզանդացիները հսկայական կորուստներ կրեցին, իսկ Դիոգենես կայսրը գերի ընկավ։
2) Բյուզանդացիները ստիպված ընդունեցին իրենց պարտությունը և հաշտություն կնքեցին սելջուկ–թուրքերի հետ։
3) Հաստատվեց սելջուկյան պետության իշխանությունը Փոքր Ասիայում։
4) Հայաստանի միայն հարավային շրջաններն ու Արարատյան դաշտն ընկան սելջուկ–թուրքերի տիրապետության տակ։
5) Տաշիր–Զորագետի, Կարսի (Վանանդի), Վասպուրականի և Սյունիքի թագավորները շտապեցին հպատակություն հայտնել սելջուկներին։
6) Հայաստանի տարածքում ստեղծվեցին Մանազկերտի, Խլաթի և այլ սելջուկյան իշխանություններ։

49 **Տրված իրադարձություններից ո՞րն է խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Հելլենիզմի դարաշրջանի սկիզբն Առաջավոր Ասիայում
2) Սելևկյան պետության առաջացումը
3) Հայկազունների Երվանդական ճյուղի իշխանության վերացումը Մեծ Հայքում
4) Սամոսատ մայրաքաղաքի կառուցումը
5) Արշամաշատ քաղաքի կառուցումը

50 **Ընտրել այն փաստարկները, որոնք չեն համապատասխանում խորհրդային իշխանության հաստատումից հետո ՀԿ(բ)Կ–ի վարած քաղաքականությանը.**

1) Սկսվեցին զանգվածային բռնություններ և հետապնդումներ քաղաքական կուսակցությունների և նախկին կառավարության անդամների և բանակի սպայության նկատմամբ:
2) Դաշնակցականներին թույլատրվեց ներգրավվել իշխանության մարմիններում:
3) Երկրում սկսեց կիրառվել «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը:
4) Ծավալվեց խորհրդային վարչակարգը հաստատելու և ամրապնդելու գործընթաց՝ տեղերում ստեղծված կուսկազմակերպությունների միջոցով:
5) Երկրում թույլ տրվեց այլախոհություն, մասնավոր սեփականության առկայություն:

Բ մակարդակ

51 **Հասկացությունը համապատասխանեցնել իր բացատրությանը.**

1. Կիլիկյան Հայաստանի բանակի ընդհանուր հրամանատարը
2. զինվորական աստիճան Կիլիկիայում, որը ստանալու համար անհրաժեշտ էր քննություն հանձնել ձիավարությունից, նետաձգությունից, նիզակի և սրի գործածությունից և այլ անհրաժեշտ գիտելիքներից և հմտություններից
3. արքունական հեծելազորի հրամանատարը Կիլիկիայում
4. կիլիկյան բանակի սպառազինության և պարենի մատակարարման ղեկավարը
5. պատերազմի ժամանակ կանոնավոր բանակին օգնելու նպատակով գյուղացիներից և քաղաքացիներից հավաքագրված զորք

ա. մարաջախտ	դ. կապիտան
բ. սպասալար	ե. ասպետ (ձիավոր)
գ. աշխարհազոր	զ. գունդստաբլ

1) 1–զ, 2–դ, 3–ա, 4–բ, 5–գ
2) 1–գ, 2–ե, 3–դ, 4–բ, 5–զ
3) 1–գ, 2–դ, 3–բ, 4–ա, 5–ե
4) 1–զ, 2–ե, 3–բ, 4–ա, 5–գ

52 **Հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. Զանգեզուր–Ղարաբաղի մարզային խորհուրդ
2. Ղարաբաղի ժողովրդական կառավարություն
3. Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդ
4. Լեռնային Ղարաբաղի Հատուկ կառավարման կոմիտե
5. «Լոռու չեզոք գոտի»

ա. Թիֆլիսի կոնֆերանսի որոշմամբ ստեղծված վարչական միավոր, ուր սահմանվել էր հատուկ կառավարում՝ հայ և վրացի ներկայացուցիչների համատեղ ղեկավարությամբ և անգլիացի գեներալ–նահանգապետի ընդհանուր վերահսկողությամբ
բ. արցախահայության I համագումարում ստեղծված երկրամասի իշխանության մարմին
գ. Զանգեզուրի ազգային խորհրդի հիմքի վրա վերակազմված և Հայաստանի Հանրապետության անունից գործող մարմին
դ. ԼՂԻՄ–ի լիազոր ներկայացուցիչների համագումարում ընտրված մարմին, որը գլխավորեց արցախցիների ազատագրական պայքարը
ե. Լոռու և Ախալքալաքի գավառներից ստեղծված վարչական միավոր, որը գտնվում էր անգլիացիների վերահսկողության ներքո
զ. ԽՍՀՄ ԳԽ նախագահության կողմից Լեռնային Ղարաբաղի պետական մարմինների ղեկավարումն իրականացնելու նպատակով ստեղծված իշխանության մարմին

1) 1–գ, 2–բ, 3–զ, 4–դ, 5–ե
2) 1–գ, 2–բ, 3–դ, 4–զ, 5–ա
3) 1–զ, 2–գ, 3–բ, 4–դ, 5–ե
4) 1–ե , 2–բ, 3–դ, 4–զ, 5–ա

53 **Թվարկված պայմաններից առանձնացնել երեքը, որոնք նպաստեցին ուշ միջնադարում քոչվորական ցեղերի ներթափանցմանը Հայաստան.**

ա. XIII–XIV դարերում մոնղոլ–թաթարական պետության թուլացումը
բ. ավատատիրության զարգացումը
գ. XIV դարի վերջին Լենկ Թեմուրի արշավանքները
դ. արաբա–պարսկական պատերազմները
ե. հայոց թագավորության անկումը
զ. մելիքությունների առաջացումը
է. խաչակրաց պետությունների անկումը

1) բ, դ, զ
2) ա, գ, ե
3) ա, դ, ե
4) բ, գ, է

54 **Թվարկվածներից որո՞նք են բնութագրում 1905–1906 թթ. հայ–թաթարական ընդհարումների հետևանքները.**

ա. Հայությունը մարտական լուրջ փորձ ձեռք բերեց:
բ. Ավելի գերիշխող դարձավ հայ ժողովրդի երկու հատվածների միասնության գաղափարը:
գ. Ամրապնդվեց հայերի և կովկասյան թաթարների ռազմաքաղաքական դաշինքը:
դ. Բարձրացավ հայերի վստահության աստիճանը. նրանք պատրաստ էին հակահարված տալու իրենց ոչ բարյացակամ հարևաններին:
ե. Հայ հոգևորականության հեղինակությունը աճեց որպես զինված պայքարի կազմակերպիչ:
զ. Սկսեց արծարծվել երկրամասի հայկական բնակավայրերը միավորելու և անկախ Հայաստան ստեղծելու գաղափարը:
է. Ռուսական մեծապետական շովինիզմն սկսեց տեղի տալ, թուլացավ ոչ ռուս ժողովուրդների ազգային–գաղութային ճնշումը:

1) ա, բ, դ
2) բ, գ, ե
3) ա, դ, զ
4) ա, բ, է

55 **Մշակութային կյանքի թվարկված իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. «Երեքի» խմբակի կազմակերպումը
բ. գրական խմբակների միավորումը Հայաստանի գրողների միության մեջ
գ. հայկական կինեմատոգրաֆի առաջնեկի՝ «Նամուսի» ցուցադրումը
դ. ռուսական դրամատիկական թատրոնի հիմնադրումը
ե. պետական կոնսերվատորիայի բացումը
զ. պատանի հանդիսատեսի թատրոնի բացումը
է. Ա. Խարազյանի գլխավորությամբ պետական շրջիկ թատրոնի կազմակերպումը
ը. «Պեպո» հայկական առաջին հնչյունային կինոնկարի էկրան բարձրանալը
թ. հայկական ժողովրդական երգի–պարի պետական անսամբլի ստեղծումը

1) ա, գ, դ, զ, ե, ը, բ, թ, է
2) ա, բ, դ, ը, թ, ե, զ, է, գ
3) ե, ա, գ, է, թ, բ, դ, ը, զ
4) ա, ե, գ, է, զ, բ, ը, դ, թ

56 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Սմբատ Աշոտյանի զահ բարձրանալը Սյունիքում
բ. Կարսի և Սյունիքի թագավորությունների հպատակվելը սելջուկ թուրքերին
գ. Գագիկ II–ի մեկնումը Կոստանդնուպոլիս
դ. Հովհաննես–Սմբատի և Աշոտ IV–ի մահը
ե. Սանահինի և Հաղպատի վանքերի հիմնադրումը
զ. Տրապիզոնի բյուզանդա–վրացական բանակցությունները
է. Դավիթ Կյուրապաղատի մահը
ը. Տաշիր–Զորագետի թագավորության վերացումը
թ. Վասպուրականի թագավորության անկումը
ժ. Կարսի պաշտպանությունը սելջուկ–թուրքերից

1) զ, ա, ե, ը, է, ժ, դ, գ, բ, թ
2) ե, է, թ, զ, ա, դ, գ, ժ, բ, ը
3) է, ա, դ, գ, բ, ե, ը, ժ, թ, զ
4) է, գ, դ, ժ, բ, ե, ը, զ, թ, ա

57 **Տրված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել չորրորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա. հայ–հռոմեական ուժերի հաղթանակը Ոսխայի ճակատամարտում
բ. Ներսեհ Սասանյանի՝ Հռոմի դեմ պատերազմի սկիզբը
գ. Խոսրով II–ի գահակալության սկիզբը
դ. Պետոսի գլխավորած հռոմեական զորքի հասնելը Հռանդեա
ե. Վաղարշ II–ի և Սևերոսի միջև հաշտության կնքումը
զ. հռոմեա–պարսկական խաղաղության պայմանագրի կնքումը Մծբինում
է. Տրդատ Արշակունու հաղթական մենամարտը գոթերի իշխանի հետ
ը. Կարակալլա կայսեր ուղարկած զորքի ջախջախումը Տրդատ II–ի գլխավորությամբ
թ. Վաղարշ II–ի գահակալության ավարտը
ժ. Տրդատ II–ի հաղթական արշավանքը դեպի Տիզբոն

1) թ
2) ը
3) գ
4) ժ

58 **1826–1828 թթ. ռուս–պարսկական պատերազմի իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել երրորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա. Օշականի ճակատամարտը
բ. Շուշիի բերդի պաշարումը պարսիկների կողմից
գ. Սարդարապատի գրավումը ռուսների կողմից
դ. Շամքորի ճակատամարտը
ե. Երևանի գրավումը ռուսների կողմից
զ. Գանձակի ճակատամարտը
է. Թավրիզի գրավումը ռուսների կողմից
ը. Հայ կամավորական գումարտակների կազմակերպումը
թ. Խոյի, Սալմաստի, Ուրմիայի և Մարաղայի գրավումը ռուսների կողմից
ժ. Աբասաբադի բերդի գրավումը ռուսների կողմից

1) ժ
2) բ
3) զ
4) թ

59 **Կատարել համապատասխանեցում.**

Գործիչ

1. Բագարատ
2. Տիրիբազ
3. Երվանդ II
4. Տիմարքոս
5. Միթրաուստես
6. Գուրաս
7. Երվազ

Պաշտոն

ա. Հայաստանի սատրապ
բ. Հյուսիսային Միջագետքի փոխարքա
գ. Հայոց երկրի գերագույն քուրմ
դ. Փոքր Հայքի կառավարիչ
ե. Հայաստանի արևմտյան մասի կառավարիչ
զ. Հայաստանի ստրատեգոս
է. Ասորիքի փոխարքա–կառավարիչ
ը. Մարաստանի սատրապ

1) 1–է, 2–ե, 3–ա, 4–ը, 5–դ, 6–բ, 7–զ
2) 1–ը, 2–ե, 3–զ, 4–ա, 5–դ, 6–բ, 7–զ
3) 1–է, 2–զ, 3–ա, 4–ը, 5–դ, 6–բ, 7–ե
4) 1–է, 2–ը, 3–ա, 4–ե, 5–դ, 6–բ, 7–զ

60 **Կատարել համապատասխանեցնում.**

ա. Վանի թագավորության զինված ուժերի ընդհանուր թիվը՝ «Սարդուրյան տարեգրության» համաձայն
բ. Հայկազուն-Երվանդյանների օրոք ռազմադաշտ դուրս բերվող հայոց բանակի թիվը
գ. Տիգրանակերտի ճակատամարտի նախօրեին հայոց զինված ուժերի թիվը
դ. Տիգրան Մեծի կողմից Միհրդատ Պոնտացուն տրված հայոց զորամասի զինվորների թվաքանակը
ե. Արտավազդ II–ի կողմից Անտոնիոսին տրամադրված զորամասի զինվորների թիվը
զ. Տիգրան Մեծի տերության զորաբանակի թվաքանակը
է. Անտոնիոսի՝ Հայաստան արշաված զորաբանակի թիվը
ը. Ասորիք ժամանած Մարկոս Կրասոսի զորաբանակի թվաքանակը
թ. Հայոց նախարարական տների հեծելազորի ընդհանուր թիվն ըստ Զորանամակի

1. 85000
2. 10000
3. 100000–120000
4. 350000
5. 300000
6. 50000
7. 70000–80000
8. 60000
9. 48000
10. 13000

1) ա–8, բ–2, գ–9, դ–1, ե–10, զ–4, է–6, ը–5, թ–7
2) ա–4, բ–9, գ–7, դ–2, ե–10, զ–5, է–8, ը–6, թ–1
3) ա–4, բ–9, գ–3, դ–10, ե–2, զ–5, է–6, ը–8, թ–1
4) ա–5, բ–9, գ–7, դ–10, ե–2, զ–4, է–8, ը–6, թ–1

61 **Իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին.**

ա. «Նոր տետրակ»–ի լույսընծայումը Պետերբուրգում
բ. Հովսեփ Էմինի վերջնական վերադարձը Հնդկաստան
գ. Գեորգիևսկի դաշնագրի կնքումը Ռուսաստանի և Վրաստանի միջև
դ. Մովսես Սարաֆյանի՝ Հայաստանի ազատագրության ծրագիրը Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիային ներկայացնելը
ե. XVIII դարի երկրորդ կեսի ռուս–թուրքական առաջին պատերազմի սկիզբը
զ. Հերակլ II–ի՝ Պարսկաստան քշված հայ բնակչությանը հղած ուղերձի տպագրումը Մադրասում:

1. 1768թ.
2. 1769թ.
3. 1770թ.
4. 1783թ.
5. 1786թ.
6. 1790թ.
7. 1792թ.

1) ա–5, բ–3, գ–4, դ–1, ե–2, զ–6
2) ա–1, բ–2, գ–3, դ–5, ե–7, զ–6
3) ա–3, բ–1, գ–2, դ–7, ե–4, զ–6
4) ա–5, բ–3, գ–4, դ–2, ե–1, զ–7

62 **Կատարել համապատասխանեցում.**

Տարեթիվ	*Ներգաղթողների թվաքանակ*
1. 1962–1982 թթ.	ա) 4000
2. 1947 թ.	բ) 10000
3. 1946 թ.	գ) 8000
4. 1921–1936 թթ.	դ) 42000
5. 1948 թ.	ե) 25000
6. 1950–ական թթ.	զ) 32000
	է) 51000

1) 1–գ, 2–դ, 3–ե, 4–բ, 5–ա, 6–է
2) 1–դ, 2–բ, 3–է, 4–զ, 5–ա, 6–գ
3) 1–զ, 2–ե, 3–է, 4–դ, 5–բ, 6–ա
4) 1–ե, 2–բ, 3–զ, 4–ա, 5–է, 6–գ

63 **Ընտրել երեք ճիշտ պնդումները.**

ա. Քանի որ 1980–ական թթ. հաստատվեց, որ Հայկական լեռնաշխարհը կազմել է հնդեվրոպական նախահայրենիքի մի մասը, ուստի ինքնըստինքյան վերացավ նաև հայերի եկվոր լինելու վարկածի արժանահավատությունը:
բ. Ներկայիս Հայաստանի Հանրապետությունն իր մեջ ամբողջությամբ ընդգրկում է միայն Մեծ Հայքի Այրարատ աշխարհը, իսկ ԼՂՀ–ն՝ Արցախ աշխարհը:
գ. Իմաստության և տիեզերական ջրերի Հայ(ա) աստծո պաշտամունքը կապվում էր Հայկական լեռնաշխարհի Եփրատ և Տիգրիս գետերի ակունքների հետ:
դ. Հայկական լեռնաշխարհում առաջին խոշոր երկրաշարժի մասին տվյալները վերաբերում են Ք. ա. 341 թ., ըստ որոնց՝ այդ երկրաշարժի պատճառը Թոնդուրեկ և Նեմրութ հրաբուխների ժայթքումն էր:
ե. Ըստ վրացական ավանդության, որը գրի է առնվել XI–XIII դդ., Թարգամոսի ավագ որդի Հայոսից առաջացել են հայերը, իսկ մնացած վեց որդիներից՝ կովկասյան վեց ժողովուրդները:
զ. Ծննդոց գրքի համաձայն՝ Համաշխարհային ջրհեղեղից փրկված Նոյ նահապետի տապանը հանգրվանել է «Արարատ լեռների վրա», և բոլոր ազգերն առաջացել են Նոյի երեք որդիներից:
է. Հունական ավանդազրույցի համաձայն՝ Յասոնի հետ Կոլխիդա նավարկած թրակիացի Արմենոսը, որն աչքի էր ընկել իր քաջագործություններով, գրավում է Հայաստանը, դառնում առաջին թագավորը, և նրա պատվին էլ Հայաստանը կոչվում է «Արմենիա»:

1) գ, դ, զ
2) բ, զ, է
3) գ, դ, ե
4) ա, գ, զ

64 **Ընտրել երեք ճիշտ պնդումները.**

Շահապիվանի ժողովը՝

ա. խիստ պատիժներ սահմանեց իրենց տերերին դավաճանած, տերերից փախած, անհնազանդ ու ըմբոստ ծառաների նկատմամբ
բ. խիստ պատիժներ սահմանեց եկեղեցու կարգերը խախտողների դեմ
գ. դատապարտեց նեստորականների գործողությունները և դավանաբանական նոր գրություն կազմեց
դ. խիստ պատիժներ սահմանեց ընտանիքի կարգերը խախտողների դեմ
ե. կանոնակարգեց և ամրագրեց Հայ առաքելական եկեղեցու դավանաբանական ինքնուրույնությունը
զ. վերջնականապես ամրագրեց Հայ առաքելական եկեղեցու ազգային և ծիսակարգային ինքնուրույնությունը
է. խիստ կանոններ սահմանեց եկեղեցական կանոնադրությունն ու պաշտամունքն ավելորդ համարող և տարատեսակ անկարգություններ ու անօրինություններ գործող բորբորիտների դեմ

1) ա, բ, զ
2) բ, դ, է
3) դ, զ, է
4) ա, գ, ե

65 **Բերված պնդումներից որո՞նք են սխալ.**

ա. 390–րդ դիվիզիան 1942 թ. մարտի սկզբներին մասնակցեց Կերչի մարտերին, որտեղ զոհվեց դիվիզիայի հրամանատար Սիմոն Զաքյանը:
բ. Ընդհանուր առմամբ՝ 1949 թ. ամբողջ Անդրկովկասից հիմնականում Ալթայի երկրամաս աքսորվեց մոտ 12 000 հայ:
գ. Այլախոհները ուժային միջոցներով չէին պայքարում խորհրդային իշխանության և մարքս–լենինյան գաղափարախոսության դեմ, այլ գաղափարական պայքար էին մղում:
դ. ԼՂԻՄ–ի Հատուկ կառավարման կոմիտեի նախագահ հռչակվեց Ն. Ռիժկովը:
ե. 1992 թ. մարտի 2–ին Հայաստանը դարձավ Միավորված ազգերի կազմակերպության լիիրավ անդամ:
զ. Հայոց ցեղասպանությունը ճանաչած և դատապարտած երկրների թիվը հասել է 42–ի:
է. 1991 թ. դեկտեմբերի 10–ին տեղի ունեցավ անկախության հանրաքվե, որը հաստատեց Լեռնային Ղարաբաղի անկախությունը:
ը. 1974 թ. հայ քաղաքական երեք կուսակցություններն առաջին անգամ կազմեցին համազգային կենտրոնական մարմին՝ գործողության միասնական ծրագիր մշակելու համար:

1) բ, դ, ը
2) ա, զ, է
3) բ, դ, զ
4) գ, դ, ե

66 **Գտնել այն երեք պատճառները, որոնք նպաստեցին IX–XI դարերում Հայաստանում ներքին առևտրի աճին.**

ա. Բյուզանդիայի հետ կնքված առևտրական պայմանագիրը սահմանափակում էր Հայաստանի մասնակցությունը միջազգային առևտրին:
բ. Քաղաքներում զգացվում էր գյուղատնտեսական մթերքների պահանջ, իսկ արհեստավորներին պետք էր հումք, որը հիմնականում բերվում էր գյուղերից:
գ. Գյուղացիները, քաղաքում մթերքներ վաճառելով, ցանկանում էին գնել իրենց համար անհրաժեշտ գործիքներ, հագուստ, կենցաղային իրեր:
դ. Հայաստանը դարձել էր ծովային առևտրի կարևոր կենտրոններից մեկը Արևելքում:
ե. Հայաստանում առաջացել էին տասնյակ քաղաքներ, որոնք դարձել էին իշխանությունների կենտրոններ և մասնակցում էին միայն տեղական ներքին առևտրին:
զ. Հայաստանում աշխույժ գործունեություն էին ծավալել մեծածախ առևտրով զբաղվող վաճառականները՝ փերեզակները:
է. Արհեստավորները իրենց արտադրանքը վաճառքի էին հանում՝ անհրաժեշտ հումք և ապրուստի միջոցներ գնելու համար:
ը. Բագրատունիներն արգելում էին Հայաստանից հացահատիկ ու գինի արտահանել, որպեսզի բնակչությունն ապահովված լիներ էժան սննդամթերքով:

1) բ, ե, է
2) բ, գ, է
3) ա, բ, է
4) գ, դ, զ

67 **Ի՞նչ հետևանքներ ունեցավ 1920 թ. թուրք–հայկական պատերազմը հայ–վրացական սահմանային խնդիրների վրա.**

ա. Ստորագրվեց հայ–վրացական համաձայնագիր «Լոռու չեզոք գոտի» ժամանակավորապես վրացական զորքեր մտցնելու մասին:
բ. Համաձայնագիրը նպաստեց պատերազմում հայկական կողմի հաղթանակին:
գ. Ավելացվեց «չեզոք գոտում» հայկական զորամասի թվաքանակը:
դ. Թուրք–հայկական պատերազմում Հայաստանի պարտությունը հնարավորություն ընձեռեց Վրաստանին պարբերաբար խախտելու համաձայնագրի դրույթները:
ե. Վրացական զորքերը մասնակցեցին ռազմական գործողություններին՝ հայկական ուժերին աջակցելու նպատակով:
զ. Վրացական զորքերը մտցվեցին նաև «չեզոք գոտու» սահմաններից դուրս գտնվող Արդահանի մարզ:
է. «Չեզոք գոտու» կառավարությունից հեռացվեց Հայաստանի կառավարության լիազոր ներկայացուցիչը, և Լոռիում հաստատվեց վրացական գեներալ–նահանգապետություն:

1) բ, զ, է
2) ա, դ, է
3) ա, դ, ե
4) դ, ե, զ

68 **Ստորև թվարկված պատմիչների աշխատություններում մինչև ո՞ր թվականն է հասցվել պատմական դեպքերի շարադրանքը: Կատարել համապատասխանեցում.**

ա. Վարդան Արևելցի
բ. Մատթեոս Ուռհայեցի
գ. Կիրակոս Գանձակեցի
դ. Հովհաննես Դրասխանակերտցի
ե. Ասողիկ
զ. Սամուել Անեցի
է. Սմբատ Գունդստաբլ
ը. Արիստակես Լաստիվերցի

1. 1167 թ.
2. 1272 թ.
3. 1265 թ.
4. 1267 թ.
5. 1071 թ.
6. 1180 թ.
7. 924 թ.
8. 1004 թ.
9. 1136 թ.

1) ա–5, բ–1, գ–3, դ–4, ե–2, զ–6, է–9, ը–8
2) ա–4, բ–6, գ–1, դ–3, ե–8, զ–9, է–2, ը–5
3) ա–4, բ–9, գ–3, դ–7, ե–8, զ–6, է–2, ը–5
4) ա–3, բ–6, գ–1, դ–7, ե–2, զ–9, է–4, ը–8

69 **Կատարել համապատասխանեցում.**

Գործիչ

1. Մեծն Մուրադ
2. Ղազար Շովրոյան
3. Եղիշե քահանա Խաչատրյան
4. Մկրտիչ Ավետիսյան
5. Անդրանիկ
6. Արմեն Գարո
7. Բաղդիկ Սիմոնյան
8. Հայկակ Կոսոյան
9. Ղուկաս Տեռվլեթյան

Իրադարձություն

ա. Նշանակվել է հայ կամավորական II ջոկատի սպայակույտի կառավարիչ:
բ. 1895 թ. աշնանը ղեկավարել է Մալաթիայի հերոսամարտը:
գ. Ընտրվել է 1915 թ. Շատախում ստեղծված զինվորական մարմնի ղեկավար:
դ. Ստանձնել է Սասունի 1894 թ. պաշտպանության ընդհանուր ղեկավարությունը:
ե. Ղեկավարել է Շապին–Գարահիսարի ինքնապաշտպանության Զինվորական խորհուրդը:
զ. Ղեկավարել է 1903 թ. աշնանը Սասունի հայտնի Գելիեգուզան գյուղում ստեղծված ինքնապաշտպանական մարմինը:
է. Ղեկավարել է 1915 թ. Վանի Քաղաքամեջ թաղամասի ինքնապաշտպանության զինվորական մարմինը:
ը. Գարուն Աղասու հետ միասին ղեկավարել է զեյթունցիների 1895 թ. հոկտեմբերի սկզբներին սկսած ապստամբությունը:
թ. Ղեկավարել է 1915 թ. Ուրֆայի ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար ստեղծված Զինվորական խորհուրդը:
ժ. Ղեկավարել է 1896 թ. Վանի ինքնապաշտպանական ուժերի միասնական ճակատը:

1) 1–դ, 2–ա, 3–զ, 4–ժ, 5–թ, 6–գ, 7–ե, 8–է, 9–ը
2) 1–ժ, 2–ա, 3–ը, 4–դ, 5–թ, 6–բ, 7–զ, 8–է, 9–գ
3) 1–դ, 2–ը, 3–բ, 4–ժ, 5–զ, 6–ա, 7–գ, 8–է, 9–ե
4) 1–բ, 2–դ, 3–զ, 4–ը, 5–ժ, 6–ա, 7–գ, 8–ե, 9–է

70 **Տրված պնդումներից ո՞ր երեքն են սխալ.**

ա) XI դարի կեսին Անիի Բագրատունյաց թագավորության անկման և Միջին Ասիայի ռազմատենչ քոչվոր ցեղերի՝ սելջուկ–թուրքերի, ձեռնարկած ավերիչ արշավանքների հետևանքով ստեղծված բարդ աշխարհաքաղաքական պայմաններում հայ ժողովուրդը շարունակեց իր պայքարը համահայկական պետականությունը վերականգնելու ուղղությամբ:

բ) Անիի թագավորության անկումից հետո հայկական թագավորություններն ու իշխանությունները՝ որպես հայոց պետականության ինքնատիպ կրողներ, դեռ երկար ժամանակ պահպանեցին իրենց գոյությունը:

գ) Բագրատունիները գահազրկվել էին Անի–Շիրակում, սակայն շարունակում էին իշխել Կարսում, Վասպուրականում, Տաշիր–Զորագետում ու Սյունիքում:

դ) Կարսի թագավորությունում դեռ Աբաս թագավորի ժամանակ հաստատված խաղաղությունը պահպանվեց նրա որդու՝ Սմբատի օրոք:

ե) Գագիկ Աբասյանը կարողացավ խնամիական կապեր հաստատել տարբեր հայ և օտարազգի թագավորական և ազնվականական տոհմերի հետ ու զգալիորեն ամրապնդել իր դիրքերը:

զ) Տաշիր–Զորագետի Կյուրիկյան թագավորության թագավոր Դավիթ Անհողինը ամուսնացած էր Կախեթի իշխան Կվիրիկեի քրոջ հետ:

է) Կվիրիկեի մահից հետո այդ իշխանությունն անցավ Դավիթի որդուն՝ Աշոտին, որն էլ դարձավ Կախեթի Կյուրիկյան հարստության նոր ճյուղի հիմնադիրը:

1) դ, ե, զ
2) ա, գ, ե
3) բ, դ, զ
4) գ, դ, է

71 **Ընտրել երեք սխալ պնդումները.**

ա. XIX դարի սկզբին Նախիջևանի խանությունը կազմված էր 20 մահալներից:

բ. XIX դարի սկզբին Ղարաբաղի խանությունը զբաղեցնում էր պատմական Արցախի տարածքը և Զանգեզուրի զգալի մասը:

գ. Թուրքմենչայի պայմանագրի կնքումից հետո Երևանում ստեղծված Վերաբնակեցման կոմիտեի աշխատանքներում հայերի կողմից գործի կազմակերպումը դրվել է գնդապետ Եղիազար Լազարյանի գլխավորած հատուկ հանձնաժողովի վրա:

դ. 1828–1829 թթ. ռուս–թուրքական պատերազմի սկզբում Եփրեմ կաթողիկոսը հանդես է եկել արևմտահայությանն ուղղված կոնդակով՝ կոչ անելով ամեն կերպ զորավիգ լինելու ռուսական բանակին:

ե. 1850 թ. Ալեքսանդրապոլի բնակչության թիվը կազմում էր 12600 մարդ:

զ. Սան Ստեֆանոյի պայմանագրի 25–րդ հոդվածով թուրքական կառավարությունը պարտավորվում էր չհալածել պատերազմում ռուսներին աջակցած քրիստոնյաներին:

է. Ռուս–պարսկական երկրորդ պատերազմի ընթացքում պարսիկների բանակում կռվում էին հայերից կազմված զորաջոկատներ՝ հայ երևելի տոհմերից Աղամալյանների և Գեղամյանների տոհմերի ներկայացուցիչների հրամանատարությամբ:

1) բ, դ, է
2) ա, բ, զ
3) գ, դ, ե
4) ա, ե, զ

72 **Բերված պնդումներից որո՞նք են սխալ.**

ա. ԽՍՀՄ–ը Գերմանիայի դեմ պատերազմում չմնաց միայնակ՝ առանց դաշնակիցների:
բ. Նադիր շահը վերահաստատեց Արցախի ներքին վարչական բաժանումն ու մելիքների ժառանգական իրավասությունները:
գ. Ադրիանապոլի պայմանագրով Ռուսական կայսրությանն են անցնում Անդրկովկասյան սևծովյան առափնյա շրջանները՝ Փոթի նավահանգստով, Կարսը, Արդահանը, Բայազետը:
դ. Պոլոժենիեով հայ ժողովուրդը ձեռք էր բերում կրոնական ինքնուրույն համայնքի կարգավիճակ, սակայն զրկվում էր սեփական լեզուն, դպրոցը պահպանելու իրավունքից:
ե. 1878 թ. մայիսի 25–ին կնքված անգլո–թուրքական գաղտնի համաձայնագրով Մեծ Բրիտանիան Թուրքիայից ստացավ Կիպրոս կղզին:
զ. Կամավորական շարժման գլխավոր նպատակն էր իրականացնել հայկական նահանգների ու Կիլիկիայի ինքնավարության հաստատումը Ֆրանսիայի հովանու ներքո:
է. Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը 1917 թ. դեկտեմբերի 29–ին ընդունեց «Թուրքահայաստանի մասին» հրովարտակը:
ը. 1918 թ. ապրիլին հաստատվեց Անդրկովկասի Ժողովրդավարական Դաշնային Հանրապետության նոր կառավարություն՝ Ա. Չխենկելու գլխավորությամբ:

1) բ, դ, ե
2) գ, դ, զ
3) բ, է, ը
4) ա, գ, զ

73 **Թվարկվածներից որո՞նք խորհրդային ամբողջատիրական համակարգի բնորոշ գծերից չեն.**

1) երկկուսակցական համակարգի հաստատումը
2) իշխանության երեք ճյուղերի իրական տարանջատումը
3) միակուսակցական համակարգի հաստատումը
4) իշխող կուսակցության ներսում ընդդիմության ոչնչացումը
5) իշխանության բռնազավթումը այդ կուսակցության կողմից
6) ընդդիմության առկայությունը խորհրդարանում
7) գաղափարախոսական բազմակարծության վերացումը
8) եկեղեցու նկատմամբ անհանդուրժողական քաղաքականությունը

74 **Ընտրել սխալ բացատրությունները.**

1) Միջնադարյան Հայաստանում եկեղեցուն վճարվող բերքի մեկ տասներորդ մասը կոչվում էր տասանորդ:
2) Հարկատու մեկ միավոր կազմող գյուղացիական ընտանիքը կամ գերդաստանը վաղ միջնադարյան Հայաստանում կոչվում էր երդ:
3) Արաբական տիրապետության շրջանում Արմինիա փոխարքայության կառավարիչը կոչվում էր ոստիկանապետ կամ փոխարքա:
4) Վաղ միջնադարյան Հայաստանում իշխանական տների կրտսեր ներկայացուցիչները կոչվում էին սեպուհներ:
5) Ժամանակի ընթացքում Արշակունյաց շառավիղներից ձևավորված առանձին ազնվական խավը հայտնի էր «ոստանիկներ» անունով:
6) Մեծ Հայքի սահմանակալ չորս նահանգների տերերը կոչվում էին բդեշխներ:
7) Հայաստանի համար կարևորագույն հարցերը քննարկելու նպատակով մինչև VI դարի երկրորդ կեսը հրավիրվող համաժողովրդական ժողովը կոչվում էր երկրային ժողով:
8) Արշակունյաց արքունիքում յուրաքանչյուր նախարարի տեղը սահմանվում էր կարևոր պետական փաստաթղթով, որը կոչվում էր Աշխարհագիր:
9) Հայ նախարարներից բռնագրավված տիրույթներից արաբների ստեղծած վարչաքաղաքական միավորները կոչվում էին ամիրայություններ:

75 **Սևրի պայմանագիրը պատմական տվյալ պայմաններում չիրագործվեց, որովհետև՝**

1) Անկարայի երիտթուրքական կառավարությունը չճանաչեց պայմանագիրը և վարեց այն ձախողելու քաղաքականություն
2) Խորհրդային Ռուսաստանը չկատարեց իր վրա դրված պայմանագրային պարտավորությունները
3) Թուրքիայի սուլթանական կառավարությունը երկրում այլևս փաստական իշխանություն չուներ
4) չվավերացվեց այն ստորագրած դաշնակից գլխավոր երկրների կողմից
5) դաշնակից երկրները ոչ միայն ճնշում չգործադրեցին քեմալականների վրա պայմանագիրը կատարելու հարցում, այլև համագործակցեցին նրանց հետ:
6) Հայաստանը չստացավ Վրաստանի աջակցությունը
7) հայկական երկու պատվիրակությունները միասնական չէին գործում
8) կնքվել էր Բրեստ–Լիտովսկի հաշտությունը

76 **Ընտրել Արտաշես I–ի իրականացրած հողային բարեփոխման հետևանքները.**

1) Կասեցվեցին համայնական հողերի հետագա զավթումները, և պահպանվեց համայնքային հողային սեփականությունը:
2) Հողեր ժառանգելու իրավունք շնորհվեց նաև իշխանական տների իգական սեռի ներկայացուցիչներին:
3) Հողեր ժառանգելու իրավունք շնորհվեց իշխանական տների կրտսեր ներկայացուցիչներին և բարձրաստիճան հոգևորականներին:
4) Օրինականացվեցին ազարակատերերի՝ մինչ այդ կատարած զավթումները:
5) Օրինազանց ազարակատերերը խոշոր տուգանք վճարեցին արքունական գանձարանին, և համայնքներին վերադարձվեցին նրանցից խլված հողերը:
6) Կասեցվեցին մասնավոր հողային խոշոր տնտեսությունների հետագա մասնատումն ու փոշիացումը:
7) Մասնավոր հողային տնտեսությունների սահմանները հստակորեն սահմանազատվեցին համայնքին պատկանող հողերից:
8) Չեղյալ համարվեցին ազարակատերերի՝ մինչ այդ կատարած հողային զավթումները:

77 **Տրված իրադարձություններից որո՞նք են խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) քրիստոնեական եկեղեցու «Հավատո հանգանակի» ընդունումը
2) մազքութների ներխուժումը Հայաստան և Վաղարշապատի գրավումը
3) Սանեսանի պարտությունը Օշականի ճակատամարտում
4) Գրիգորիսի նահատակությունը և հուղարկավորումը Ամարասում
5) Դատաբեն Բզնունու և Բակուր բդեշխի մահապատիժը
6) Հուսիկ կաթողիկոսի ձեռնադրությունը Մաժակ-Կեսարիայում
7) Շապուհ II–ի հարձակումը Հռոմեական կայսրության վրա և Մծբինի գրավման անհաջող փորձը
8) Վաչե Մամիկոնյան սպարապետի և իր զինակիցների նահատակությունը
9) Տիրան թագավորի բնակություն հաստատելը Կուաշում

78 **Տրված իրադարձություններից որո՞նք են խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Տուշպա մայրաքաղաքի հիմնադրումը
2) Վանի թագավորության տեղական սեպագրի ստեղծումը
3) բարիդրացիական հարաբերությունների հաստատումը Վանի թագավորության և Ասորեստանի թագավոր Սինաքերիբի միջև
4) Մենուախինիլի քաղաքի հիմնադրումը
5) Աբիլիանի երկրի միացումը Վանի թագավորությանը
6) Էրեբունի ամրոցի հիմնադրումը
7) Սարդուրի III–ի հիշատակումն ասորեստանյան արձանագրություններում
8) Վանի թագավորության միասնական դիցարանի ստեղծումը
9) հայկական նոր թագավորության հռչակումը Պարույր Հայկազունու գլխավորությամբ

79 **Բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

1) Արդյունաբերացնել Խորհրդային Հայաստանը նշանակում էր ստեղծել արդյունաբերական նոր ճյուղեր, կառուցել գործարաններ, ֆաբրիկաներ, հիդրոէլեկտրակայաններ, ընդլայնել երկաթուղիները:
2) Հայաստանում 1920–ական թթ. չկային Լ. Տրոցկու տեսակետների պաշտպաններ:
3) 1932 թ. սկզբին Հայաստանում առանց դատաքննության և դատարանի վճիռների գնդակահարվեց շուրջ 1000 մարդ, տարբեր ժամկետների ազատազրկման ենթարկվեց շուրջ 500 մարդ:
4) 1937 թ. հուլիսին Բերիայի հրամանով Թիֆլիսում սպանվեց Աղասի Խանջյանը:
5) Խորհրդային իշխանության համար Հայոց եկեղեցին և առանձին հոգևորականներ կապի միջոց էին Սփյուռքում գործելու համար:
6) ՀԿ(բ)Կ կենտկոմը 1938 թ. օգոստոսի 4–ին որոշում ընդունեց Էջմիածնի վանքը փակելու մասին. Մոսկվան հաստատեց այդ որոշումը:
7) 261–րդ հրաձգային դիվիզիայի հիմնական խնդիրն էր պաշտպանել Խորհրդային Հայաստանի՝ Թուրքիայի հետ ունեցած պետական սահմանը, ինչպես նաև ռազմաճակատի համար պատրաստել երթային գումարտակներ:
8) Հայրենական մեծ պատերազմում առաջին հայ հերոսը օդաչու Նելսոն Ստեփանյանն էր:

80	**Ստորև բերված փաստարկներից որո՞նք են սխալ.**

1) Կիլիկիայում հայտնի «Փոքր չելլոյի» առաջնորդը խիզախ գործիչ Թորոս Ծառուկյանն էր։
2) 1893 թ. Արաբոն 16 հոգով անցնում է Արևմտյան Հայաստան և, Գյալիսորի ձորում կռվի բռնվելով քրդերի ու թուրքերի դեմ, իր ընկերների հետ հերոսաբար զոհվում է։
3) 1905 թ. Աղբյուր Սերոբի հավատարիմ զինվորներ Գևորգ Չավուշն ու Անդրանիկը վրեժխնդիր են լինում թշնամուց՝ սպանելով Բշարե Խալիլին։
4) Հրայրը, որին թշնամին Դժոխք մականունն է տվել, ծնվել է 1864 թ. Սասունի Ահարոնք գյուղում, սովորել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, զբաղվել ուսուցչությամբ։
5) Անդրանիկ Օզանյանը ծնվել է 1865 թ. փետրվարի 25–ին Շապին–Գարահիսար քաղաքում, սովորել է տեղի Մուշեղյան վարժարանում։
6) 1906 թ. Անդրանիկը հեղինակել է «Մարտական հրահանգներ» կանոնագիրքը։
7) 1891 թ. Թավրիզում դաշնակցության հիմնադրած «Խարիսխ» զինագործարանը վերածվում է զենքի արտադրության կարևոր կենտրոնի։
8) Հնչակյանները 1890 թ. հուլիսին Կ. Պոլսի Գում Գափու թաղամասում կազմակերպեցին խաղաղ ցույց։
9) 1890–ական թթ. օսմանյան Թուրքիայում ոչնչացվեց շուրջ 300 հազար հայ։